



№ 260

15 12 2009թ

Միության նախագահ
Председатель Правления
Chairman of the Board

**ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ
«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԱՐՇԱՎԻ»
ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ**

Սիրելի Ձորի Հայկի

Ահա արդեն յոթ ամիս է, ինչ հայ ժողովուրդը ուշի-ուշով և ազգային հպարտության անխառն զգացումով հետևում է հայկական շուրջերկրյա նավագնացության առաջնելի՝ «Արմենիայի» երթուղուն: Արկածներով և խորին խորհրդով լեցուն մոտ 40 հազար կիլոմետր ճանապարհ, և այսօր խիզախ անձնակազմը, Ձեր ղեկավարությամբ, նշում է աննախադեպ արշավի հաջող լրումը: Իսկական ֆանտաստիկա ... 21-րդ դարում: Բայց հասկանալի է, արագությունների և տիեզերական նվաճումների մեր ժամանակներում ձեր ձեռնարկած ճամփորդության ֆանտաստիկ կողմը այլ, առավել գնահատելի ենթաիմաստ ունի:

Այն, որ հայկական եռագույնը ծածանելով «Արմենիայի» կայմին՝ առաջին անգամ կտրեցիք- անցաք Ատլանտյան օվկիանոսը, այն, որ Պանամայի ջրանցքով Ատլանտիկայից առաջին անգամ մտաք Խաղաղ օվկիանոս, այն, որ հայկական անձնակազմով առաջին անգամ հատեցիք հասարակածը,- մեզ հիացնում է, բայց չի զարմացնում, քանզի ռահվիրայի, առաջամարտիկի առաքելությունը Ձեր բուն կոչումն է եղել միշտ և ամենուր, «առաջին անգամ» արտահայտությունը հաճախ է ուղեկցել Ձեր նախաձեռնություններին:

Մեզ զարմացնում ու հիացնում է Ձեր անշիջելի սերն ու մեծ նվիրումն ազգային արժեքներին, մեր նյութապաշտ ժամանակներում ժողովրդի միասնության ոգին բորբոք պահելու, ավանդույթի արմատների վրա նոր սերնդի հոգևոր ժառանգության սաղարթը ձևավորելու և ճոխացնելու ձեր բացառիկ կամքը: Դա յուրատեսակ կոչ-պատգամ է երիտասարդությանը՝ ստանձնելու Անցյալը նորովի իմաստավորելու, Ներկան կառուցելու և Ապագան ծրագրելու պատասխանատվությունը:

Այս գիտակցությամբ էլ, ահա, դուք ավարտին հասցրիք հայկական աշխարհաշուրջի առաջին փուլը Բուենոս-Այրեսում: Եվ ամենահուզիչը՝ արշավը կրում է մեր ինքնության խորհրդանիշերից մեկի՝ Մեսրոպ Մաշտոցի անունը, որն իր գրերի գյուտով խորհրդանշում է հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը: Իմաստուն այրի լայնախոհությամբ Դուք կարևորեցիք նոր հազարամյակում ազգային վերածնության նոր մեկնարկի ռազմավարական կարևորությունը և պատանեկան ամյունով ձեռնամուխ եղաք այդ գործին, հավելելով նաև աշխարհասփյուռ հայության մարդկային ու մշակութային արժեքների «գուլջագրումը»:

Ջերմորեն շնորհավորում են ձեզ, հրաշալի յոթնյակիդ, աշխարհաշուրջի առաջին փուլի հաջող ավարտի առիթով և անհամբեր սպասում ձեր վերադարձին:

